№ 79 ՀԻՆԳՇԱԲԹԻ 11 ԱՊՐԻԼԻ

1913
ՔԱՌԱՍՈՒՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՀԻՆԳՇԱԲԹԻ 11 ԱՊՐԻԼԻ № 79

Տարեկան գինը 10 բուբլի. կէս տարվանը և 7 ամսվանը 6 բուբլի.
Առանձին հաւարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.

Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.

Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція «Мшакъ»
Сергіевская ул. № 5.
Tiflis, Rédaction „Mschak"

Խմբագրատան տէլէֆօն № 2—53.

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2
(բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10—20 կոպ.

Տպարանի տէլէֆօն № 67.

ՊԱՊԻՐՕՍԱՆԵՐ ԳԱԼԻՍ „ԿՕՄԷՏԱ" ԸՆԿ.
ԹԻՖԼԻՍՈՒՄ:
25 հատը—15 կոպ., 10 հատը—6 կոպ. (և. ու.) 986. 0—31

ՀԱՆԳՈՒՑԵԱԼ
ՍՕՖԻԱ ՍՈՒՆԴՈՒԿԵԱՆՑԻ
զաւակները յայտնում են խորին շնորհակալութիւն բոլոր այն անձերին և հիմնարկութիւններին, որոնք յարգեցին հանգուցեալի յիշատակը անձամբ, նամակներով և հեռագիրներով։ 280. 1—1

ՁԱՏԿԱԿԱՆ ՄԵԾ ԶՐՕՍԱՆՔ
Երկուշաբթի, ապրիլի 15-ին
ԱՐՏԻՍՏԱԿԱՆ ԸՆԿ. ԱՄԱՐԱՅԻՆ ԱՑԳՈՒՄ (Միխայլովսկի պր.)
ՅՕԳՈՒՏ
ՀԱՅՈՒՀԵՏԱՑ «ՄԵՂՈՒ» ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԱՆ
ՄԱՆՈՒԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ
Սիսեմատագրաք (զուտ մանկական ծրագրով)։ Մանկական խաղեր։ Մանկական երգ դրոշակներով։ Օգապարիկ։ Տիկնիկ։ Օգակների խաղ մանուկների համար առանձին պատրաստված։
ՄԵԾԵՐԻ ՀԱՄԱՐ
Պալ-շվօ, տումբաչկա, օղակների խաղ (մեծահասակների համար առանձին)։ Կոնֆէտտի նուէրներով։ (Կոնֆէտտիի իւրաքանչիւր պարկի հետ տրվում է մի գեղեցիկ իր)։ Գուշակութիւններ։ Ամերիկական բազար։ Ծաղիկներ։
ԲՈՒՖԷՏ
Երաժշտ. երկու խումբ՝ զինուորական և լարանուագ։ Թիֆլիսի Գրենադերեան 15-րդ գնդի։ Սկիզբն է ցեր. ժ. 4-ին։ ◆ Մուտքը մեծերի համար 25 կ., երեխ. և ուսանողներին՝ 15 կ.։
կ. առ. 271. 2—1

Կ. Հ. Բ. Ը. Խորհուրդը յայտնելով, որ առաջիկայ Զատկի տօների առիթով
շնորհակալութեամբ ընդունում է ԱՂՔԱՏՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՆՈՒԷՐՆԵՐ դրամով, մթերքներով և շորով ամենայն օր՝ առաւօտեան ժամը 9-ից մինչև 2-ը և երեկոյեան ժամը 5-ից մինչև 7-ը Ընկերութեան գրասենեակում (Абасъ-Абадская площадь № 7, с. д.), խոնարհաբար խնդրում է բարեսիրտ ունեցողներին օգնութեան հասնել թշուառներին։ Ընդունվում են նաև նուիրատուութիւններ զատական փոխայցելութիւնների փոխարէն։
առ. 276. 2—2



ԿՈՎԿԱՍԵԱՆ ԸՆԴԵՐՈՒԹԻՒՆ
ԴԵՂԱՏԱՆ ՄԹԵՐՔՆԵՐԻ
Ա. ՌԵՍՏՐԻ
ԹԻՖԼԻՍ, ԲԱԳՈՒԴԻԹՈՒՄ.
ՆԵՐԿ ԶՈՒԵՐԻ ՀԱՄԱՐ
զանազան գոյների, փոշեացրած, հեղուկ և մարմարէ՝ անդրադարձող նկարներով, նոյնպէս և բուսական կարմիր գոյնի։
◆ ԼԱԿ ԶՈՒԵՐԻ ՀԱՄԱՐ։
282. 1—1

ՇԱՊԻԿՆԵՐ
ՕՁԻՐՆԵՐ
ՓՈՂԿԱՊՆԵՐ
ԶԱՊՕՆԿԱՆՆԵՐ
ՁԵՌՆՈՑՆԵՐ
ԳՈՒԼՊԱՆԵՐ
ԱՂԼՈՒԽՆԵՐ
ՊՕՄՕԶՆԵՐ
ՊՕԴՎԵԱԶԿԱՆԵՐ
ՁԵՌՆԱՓԱՑՏԵՐ
ՀՈՎԱՆՈՑՆԵՐ
ՎԵՐԱՐԿՈՒՆԵՐ
ԶԳԵՍՏՆԵՐ
ՏՈՒԺՈՒՐԿԱՆԵՐ
ԺԻԼԷՏՆԵՐ
ԳԴԱԿՆԵՐ
ԿԱՍԿԷՏՆԵՐ
ԱՄԵՐԻԿԱԿԱՆ ԿՕՇԿԵՂԷՆ
ՏՈՒՖԼԻՆԵՐ
ԹԷ ՏԱՆ ԵՒ ԹԷ ՎԱԳՕՆԻ ՀԱՄԱՐ
ՎԵՐԱՐԿՈՒՆԵՐ ԱՆԹԱՓԱՆՑԻԿ
ՊԱՑՈՒՍԱԿՆԵՐ
ՍՆԴՈՒԿՆԵՐ
ՊՕՏՏ-ՊԼԷԴՆԵՐ
ԸՆԿ. ԱԼՃՎԱՆԳ
Դվորցովայա, տել. 4—77.
281. 1—1

ԿՆԱԲՈՒԺԱԿԱՆ ԵՒ ՎԻՐԱԲՈՒԺԱԿԱՆ
ՄԱՍՆԱՒՈՐ
ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
Ռտիշչէվսկայա 13, տէլէֆօն 4—21.
Ընդունելութիւն թէ կանացի և թէ ներքին, նոյնպէս և վիրաբուժութեան կարիք ունեցող մնայուն стаціонаръ) հիւանդների (բացի վարակիչ և հոգեկան հիւանդութիւններից), վաղօրօք գրվելու պայմանով։
Ընդունելութիւն կանացի, ներքին և մանկական հիւանդութիւն ունեցող երթեկ հիւանդների, ամեն օր՝ ցեր. ժամը 11-ից մինչև 12-ը։
Ընդունելութիւն պրոֆ. Մ. Ս. Սուբբոտինի կողմից վիրաբուժ. կարիք ունեցող հիւանդների, վաղօրօք գրվելու պայմանով, երկուշաբթի և հինգշաբթի օրերը ցեր. ժամը 1—2-ը։
Հիւանդանոցի բժիշկները
Ա. Ա. Յարութիւնեան, Ն. Ն. Վասելովսկի, Վ. Ա. Զակրժէվսկի, Ի. Գ. Կալամկարեան, Ա. Ա. Նովիցկիյ, Գ. Ն. Տէր-Ներսէսեան, Ն. Զ. Ումիկեան, Ա. Ռ. Փիշէր, Ս. Պ. Շահպարոնեանց, Կոնսուլտանտ՝ պրոֆեսոր Մ. Ս. Սուբբոտին։
(հ.կ.) առ. 779. 100—45

ՈՒՐԻՇ ԱՐԴԻՒՆՔ ՉԷ ԿԱՐՈՂ ԼԻՆԵԼ.

Եւրոպական մամուլի մէջ լուրեր եւրևացին Թիւրքիայի մի քանի զիջումների մասին ասիական իր սահմաններում։

Օրինակ՝ Անգլիային արտօնութիւն է տրված Պարսից Ծոցի ծովափի հողերում վայելել մուտքի իրաւունքներ։ Գերմանիային խոստացված են նոր արտօնութիւններ Կիլիկիայի և ուրիշ շրջաններում զանազան ձեռնարկութիւններ հաստատելու համար։ Լուրեր կան, որ Իտալիային կը տրվեն մի երկու կղզիներ։

Ի՞նչ նպատակով են անվում այդ զիջումները։

Այն նպատակով, որպէսզի պետութիւնները աւելի բարեկամաբար տրամադրված լինեն թէ առաջիկայ հաշտութեան պայմանները մշակելու ժամանակ, թէ Պարիզի ֆինանսական խորհրդածութեան որոշումներ կայացնելու միջոցին և թէ նոր փոխառութիւնների աջողութիւնը ապահովելու համար։

Անշուշտ, այդ զիջումները որոշ ազդեցութիւն կունենան մտքերի և տրամադրութիւնների վրա և գուցէ կը թեթևացնեն ֆինանսական պարտաւորութիւնների և բեռների այն ծանրութիւնը, որ կարող էր բարձվել Թիւրքիայի վրա պատերազմական մեծ տուգանք սահմանելու ժամանակ։

Գուցէ, ասում ենք, այդ նախնական զիջումներից մի որոշ ատիճան օգուտ կունենայ Թիւրքիան, բայց այն գործողութիւնները, որոնք հանդէս են գալիս այդ զիջումները անելու ժամանակ, իրանց ընդհանրութեամբ և էութեամբ վտանգաւոր են Թիւրքիայի համար։

Դրանք Թիւրքիայի քաղաքական նորանոր տեղատուութեան երևոյթներն են։ Դրանք արտաքին քաղաքական յարաբերութիւնների սահմանափակման և կրճատման սկզբնաւորութիւններն են։

Սխալ կուլտուրական գործողութիւնների տրամադրութիւնը տանում է ճակատագրական անողոք ընթացքով Թիւրքիային այնտեղ, ուր նրա վարիչները մղել են տասնեակ տարիներ և այժմ էլ մղում են, արհամարհելով քաղաքակիրթ մարդկութեան փրկիչ սկզբունքները և գործելակերպերը։

Բարեկամաբա՞ր կը մօտենան պետութիւնները Թիւրքիային։

Անշուշտ՝ բարեկամաբար։

Մէկը կը վերցնի այս ծովափը, միւսը՝ մի ուրիշ ծովափ, երրորդը կը շահի արտօնութիւն երկաթուղային գծեր անց կացնելու, չորրորդը հանքեր շահագործելու, հինգերորդը առևտրական առանձնաշնորհումներ ձեռք բերելու և այլն։

Թիւրքիան հաճութեամբ կանի այդ զիջումները, եթէ պետութիւնները խոստանան շատ պահանջկոտ չը լինել բարենորոգութիւնների խնդիրներում և կրճատել Հայաստանի, Սիրիայի, Եմենի և ուրիշ շրջանների ինքնավարական պահանջների ծրագիրները։

Քաղաքական տհասութիւնը և անմտութիւնը աւելի տխուր արտայայտութիւն չէ կարող ունենալ, քան այն, ինչ որ արվում է և անում է բարոյապէս և քաղաքականապէս մանկացած Թիւրքիան։

Եւ նա կը գնայ դէպի վերջնական կործանում։

Այդպէս չէ ցանկանում նա իր խօսքով։

Բայց այդպէս է նա ցանկանում իր գործելակերպերի տրամաբանութեամբ։

Իսկ եթէ նա աւելի խելամիտ լինէր, աւելի հեռատես և խոհուն ներքին քաղաքականութիւն ունենար և չը վախենար ներքին ընդարձակ բարենորոգչական գործունէութիւնից, անշուշտ, նա գտած կը լինէր և իր փրկութեան ճանապարհը։ Եւ, անկասկած, ստիպված չէր լինի զիջել իր իրաւունքները, տալ առանձնաշնորհումներ, որոնք շոշափում են իր քաղաքական ինքնօրինութեան սահմանները։

Այդ նա չէ կարողացել ըմբռնել, և այժմ էլ յոյս չը կայ, որ ըմբռնի երկարատև հաստատակամութեամբ։

Եթէ Թիւրքիան հետաձգած լինէր այն քաղաքականութեան, որ աւելացնէր իր ժողովրդի, իր հպատակների արտօնութիւնները, նա այսօր չէր տայ արտօնութիւններ օտար պետութիւններին։ Այդ քաղաքականութիւնը և գործելակերպը նա ցանկացել է իւրացնել և ստիպված է քաղել պտուղները այն սերմերի, որ նա սերմանել է։

Ա. Քալանթար

ՁԿՆԱՎԱՃԱՌ ԽԱՆՈՒԹ
Զ. Զ. ԴԱՒԻԴՕՎԻ
(Թամամշևի քարվանսարա, Պուշկինեան այգու դիմաց)
ՍՏԱՑՎԱԾ Է
ԿԱՆԱՉ ԼՈԲԻ
Արկղիկների մէջ։
Մեծ արկղիկի արժէքը 30 կոպ.
Նոյն տեղը շարունակ ստացվում են թէ ԹԱՐՄ ԶՈՒԿ և թէ ձկնեղէն մթերքներ։

ԲԵՐԼԻՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ԲԺՇԿԱՊԵՏ
Գ. Գ. ՄԵՀՐԱԲԵԱՆՑ
Ներքին հիւանդութիւններ՝ առանձնապէս կրծքի, ԹՈՒՔԹԻ և սրտի։
Բժշկութիւն նաև ՏՈՒԲԵՐԿՈՒԼԻՆՆԵՐՈՎ, ԲԱԳԻՒ պրէպարատներով և վիրաբուժական միջոցով՝ ՊՆԵՎՄՕՏՈՐԱԿՈՎ։
Ընդունելութիւնը ամեն օր, առաւօտեան ժամը 9—1-ը և երեկոյեան ժամը 5—8-ը։
Զբաւորներին առ. ժամը 9—10-ը ձրիաբար։
Սօլոլակի, Բիհրութեան փող. № 23 (անկիւն Դանովսկայայ)։ Հեռախօս 7—92.
(ա.օ.) առ. 92. 100—49

ԲԺԻՇԿ
Յ. Մելիք-Նուբարեան
Ներքին և երեխաների հիւանդութիւնների, առանձնապէս թոքերի։
Թորախտի բժշկութիւնը տուբերկուլիններով և պնեվմատորակով։
Ընդունելութիւնը ՆՈՐ ԲՆԱԿԱՐԱՆՈՒՄ
Ամեն օր (առաւօտեան 12—1 ժ.
(երեկոյեան 5—7 ժ.
Սօլոլակ, Ռտիշչէվսկայա 10 (Լերմոնտովսկ. դեղատան դիմացը)։
(և. հ. կ.) առ. 746. 100—78

ԱՊՐԻԼԻ 7-ԻՑ ԲԱՑՎԱԾ Է ԴԵՂԱՑԻՆ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԱՌԻՍՏՐՈՎ ՊԱՐԱՊՈՂ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹԵԱՆ ԽԱՆՈՒԹ
„ՍՕԼՕՏԱՏ"
Քիրմայով, Սօլոլակայայ փողոցի վրա Թիֆլիսի Փոխադ. Վարկի Ընկ. նոր շինութիւնում մէջ։ ՔՍԱՆՀԻՆԳԱՄԵԱՑ իմ գործունէութիւնը Դեղատային Ապրանքների Առևտրի Կովկասեան Ընկ. Երևանեան հրապար. վրա գտնվող խանութի մասնէնի պաշտօնում, գործին հմուտ լինելը, նոյնպէս և ներկայ նորաբաց խանութում յայտնի ֆիրմաների բարձր յատկութեան թարմ ապրանքներ ունենալը իրաւունք են տալիս ինձ յուսալու, որ Թիֆլիսի հասարակութիւնը ուշադրութեան կառնի խանութը ու միևնոյն ժամանակ կատարելապէս կը համոզվի ապրանքները բարեխղճօրէն վաճառելու մէջ։
առ. 274. 10—3 (ա.օ.) ԱՐՏԵՄ Բ. ՕՎՀԵԱՆՑ

ԲԺԻՇԿ
ՇՈՒՇԱՆԻԿ ՆԱԲԱԹԵԱՆ
Ընդունում է հիւանդներ կանանց և մանկաբարձութեան վերաբերեալ ամեն օր, բացի կիրակի օրերից, երեկ. ժամը 5—6-ը։
Հասցէն՝ Ռտիշչէվսկայա № 1.
առ. (կ. ե. հ.) 4. 100—39

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ
Գ. Յ. ԳԱՐԱԿԻԻԼԵԱՆ
(Նախկին օգնական Կամայեվի)
Վերադառնալով արտասահմանից վերսկսել է հիւանդների ընդունելութիւնը
Ամեն օր՝ առաւօտեան ժ. 9—11½-ը և երեկ. ժ. 4—7-ը։
Վելեմինովսկայա փողոց № 4, բն. 3.
առ. (օ.մ.) 129. 50—21

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)
6 ապրիլի

Սալէտ.—«Սլօբօդան» հաղորդում է, որ ի պատիւ բալկանեան պատգամաւորների Դալմացիայում ցոյցեր կազմած պաշտօնեաների դէմ ձեռք են առնվել նոր պատիժներ։

Էլբասան.—Հաղորդում են, որ սերբ զօրքերի մեկնելուց յետոյ Ալբանիայում առաջ են գալիս լուրջ անկարգութիւններ։ Ալբան պարագլուխները չեն ճանաչում Էսադ-փաշայի նշանակած իշխանաւորին։ Քրիստոնեայ և մահմեդական ալբանները մշտական վէճերի մէջ են։ Պէկինիէում մահմեդա-

կանների ընդհարումը քրիստոնեաների հետ վերջացաւ կոտորածով։ Երկիւղ կայ, որ Ալբանիան անիշխանութեան նախօրինակին է գտնվում։

—

Կահիրէ.—Լուրերի համաձայն՝ պրինց Ֆուադը հրաժարվեց ալբանական գահի թեկնածութիւնից։

—

Պետերբուրգ.—«Б. Вѣд.»-ում երևեցած այն տեղեկութիւնը, թէ իբր Կ. Պոլսի նախկին դեսպան Զարիկովը մեկնելու է Բալկան քաղաքական յանձնարարութեամբ, մեղանչում է իրականութեան դէմ։

—

Բերլին.—Լանդտագը երկրորդ ընթերցումից յետոյ ընդունեց այն օրինագիծը, որ հեռամուտ է ուժեղացնել գերմանական տարրը Արևելեան Պրուսիայում և Պոզնանում, որի համար խնդրվում է յատկացնել 230 միլիոն մարկ։ Վերին ատիճանի ընորոշ ճառ արտասանեց անկախ պահպանողական Կարդորֆը, որ մատնանշեց լեհական նահանգների ցաւալի վիճակի վրա այն բոպէին, երբ նրանք անցան Պրուսիային։ Այնպիսի քայքայված պետութիւն և պետական կազմ, ինչպիսին Լեհաստանում է, երբէք ոչ մի տեղ գոյութիւն չէ ունեցել։ «Լեհերը,—ասաց հռետորը,—երբէք չեն կարողացել ստեղծել պրուսականի նման պետութիւն։ Այժմ լեհերը հանդիսանում են մի պետութեան քաղաքացիներ, որ տակաւին վայելում է ազատութեան ու արդարադատութեան տերութեան հռչակ»։

Երբ այս խօսքերը առաջ բերին ծիծաղ լեհերի կողմից, Կարդորֆը բացականչեց. «Համեմատեցէք Պրուսիայում ունեցած ձեր դրութիւնը Ռուսաստանում և Գալիցիայում ապրող լեհերի կացութեան հետ. երկուսի տարբերութիւնը նոյնն է, ինչպէս գիշերը զանազանվում է ցերեկից։ Լեհերի դորժունէութիւնը Գալիցիայում կայանում է սոսկ ռուսներին նեղելու մէջ։ Դրժուար է երևակայել, թէ ինչպէս են լեհերը հաշտվում ռուսերէնը»։

—

Բերլին.—«Պոստը» տպել է քրիստիական ազգին վիրաւորական յօդուած։ Այդ առիթով «Նորդ-Դեյտշէ-Ալգեմ. Ցայտը»-ը տպել է բողոք «Պոստի» այդ օրինակ դրդռիչ վարմունքի դէմ։

—

Լենդոն.—Համայնքների պալատում ներկայացնելով բիւջէն Լլոյդ-Ջորջը մատնանշեց, որ անցեալ տարին նպաստաւոր էր բրիտանական առևտրի համար, որ ծաղկման հասաւ չը նայած մի շարք աննպաստ պայմանների։

—

Բրիսսէլ.—Պատգամաւորների պալատը ձայների մեծամասնութեամբ ընդդէմ սոցիալիստների՝ հաւանութիւն չը յայտնեց ընդհանուր գործադուլին։

ՕԴԱԳՆԱՑՈՒԹԵԱՆ ԱՆԱԿՆԿԱԼՆԵՐԸ

—

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

9 ապրիլի

Նանսի.—Արակուրա քաղաքից դէպի հիւսիս իջաւ մի աէրոպլան գերմանացի երկու օֆիցէրով։ Մէկը նրանցից՝ Դարմշտատի աէրոդրոմի կառավարիչ կապիտան Դէվալը՝ յայտնեց, որ աէրոպլանը դուրս եկաւ Դարմշտատից դիմելով դէպի Մեց, բայց բենզինի քչութեան պատճառով իջաւ, կարծելով թէ գտնվում է գերմանական հողի վրա։

—

Պարիզ.—Զորս օդագնաց օֆիցէր զինուորական իշխանութիւններից մեկնեցին գերմանական զինուորական օդաղնացների իջած տեղը։ Քաղաքացիական և զինուորական իշխանութիւնները միաբերան ընդունում են, որ աէրոպլանն իջել է մէջը նստածների կամքի հակառակ։

Բերլինի ֆրանսական դեսպանին հրահանգագրվեց, թէ պէտք է գերմանական կառավարութեան լուրջ ուշադրութիւնը հրաւիրել, որպէսզի նման դէպքեր տեղի չունենան Ֆրանսիայի սահմանագլխում, որոնք կարող են լուրջ թիւրիմացութիւններ ստեղծել։ Երկու կառավարութիւնների միջև բանակցութիւններ են սկսված համաձայնութիւն կապելու այն դժուարութիւնների առիթով, որոնք կարող են առաջանալ օդապնացութեան հողի վրա։

—

Նանսի.—Գերմանական աէրոպլանը թռաւ Արակուրից։

ԲԱԼԿԱՆԵԱՆ ՏԱԳՆԱՊԸ

ՍԿՈՒՏԱՐԻ ԱՌՈՒՄԸ

—

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

9 ապրիլի

Ցրիէստ.—«Պիկոլո» լրագրին տեղեկացնում են Ցէտինիէից, որ Իսադ փաշան լիազօր ուղարկեց չերնոգորական զօրքերի հրամանատարի մօտ իմանալու Սկիւտարի անձնատուր լինելու պայմանները։ Նիկոլայ թագաւորը գումարեց զինուորական խորհուրդ, ուրից յետոյ չերնոգորական ներկայացուցիչներ գնեցին Վուկոտիչը և Պլամենացը դիմեցին Սկիւտար։

—

Վիէննա (Ճեպընթաց).—Ցէտինիէից պաշտօնապէս հաղորդում են, որ չերնոգորցիների զօրքերը մեծ յաղթանակով ներս են մտել Սկիւտար։

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԴՐԱՄԱՏՈՒՐԳԻ ԱՐԺԱՆԱՒՈՐ ԱՄՈՒՍԻՆԸ

—

Դարձեալ պակասեց մէկը հայ մտաւոր ընտանիքից, դարձեալ կարճացաւ մտաւոր շղթան, ընկաւ նրա օղակներից մէկը, մեռաւ տիկ. Սոֆիա Սունդուկեան... Բայդուշ, բայդուշ, բայդուշ... դու կայծակնահար ծեր կաղնու նման կանգնած ես, կուրծքդ փոթորկին դէմ տուած. քեզ վրա ոչինչ չէ ազդում։ Եթէ փոթորիկը քո գլուխը շարժում, մի բօպէ թեքում է, դու դարձեալ ուղղում ես գլուխդ և բայդուշի նման բուում... բու, բու, բու... Դէհ, ծեր բու, վեր առ դեղած յիշատակարանդ և մի քանի թարմ տողեր աւելացրու։

* * *

17 մարտի 1913 թուի

Երէկ կատարեցինք Գաբրիէլի մահվան տարելիցը։ Ես ուշ գնացի եկեղեցի և մեծ զարմանքով նկատեցի տիկ. Սոֆիայի բացակայութիւնը։ Իմ հարցական հայեացքին՝ Նէման պատասխանեց.

— Մայրիկը քիչ տկար է. մենք վճռեցինք, որ նա ուշ գայ եկեղեցի։ Մի անհանգստանար, վտանգաւոր ոչինչ չը կայ...

Հեշտ է ասել՝ «մի անհանգստանար»... Ես օրօրվում էի ոտքերիս վրա, ինչպէս 14 տարեկան աշակերտ, և անդադար հայեացքս ուղղում էի դէպի եկեղեցու դուռը. կամենում էի շուտով տեսնել բարի դէմքը, հրաշալի ժպիտը շրթունքներին։ Ես ուսումնասիրած ունէի խաղաղատեղծ այդ դէմքը, որի արտայայտութիւնից ես կը գուշակէի նրա ֆիզիքական ու բարոյական դրութիւնը։

Ո՞վ էր ինձ համար տ. Սոֆիան երկար տարիների այս ահագին տարածութեան վրա. նա իմ մայրն էր, իմ քոյրը, իմ հայրը, իմ մտերիմը... Որքան դառն արտասուքներ եմ թափել նրա անարատ ձեռքերը համբուրելիս ու իմ վշտերը նրան պատմելիս, որքան անկեղծ և սրտագին ծիծաղով նա ծիծաղել և ուրախացել է իմ ուրախութիւնը տեսնելով։ Անգին, անարատ, անմոռանալի, քնքոյշ տ. Սոֆիա, համեստ հասարակական գործիչ, օրինակելի ամուսին ու մայր, անկեղծ ու հաւատարիմ բարեկամ...

Նա մտաւ եկեղեցի։ Ես ուրախութեամբ համբուրեցի նրա ձեռնոցը, որովհետև նրա դէմքը արտայայտում էր միայն յոգնածութիւն, այլ ոչ հիւանդութիւն։

— Վասո, այսօր անպատճառ մեզ մօտ պիտի ճաշես։ Բացառապէս մեր ընտանիքը կը լինի։

— Նէման ինձ ասաց, բայց ես ինքս էլ մտադիր էի այսօր ձեզ մօտ անցկացնել։ Ձեր խօսակցութիւնը ինձ տաքացնում է, իմ եռանդը աւելացնում...

Եւ կանգնած էի տիկնոջ հետ ու հետաքրքրում էի նրա բոլոր շարժուածքները։ Ես համոզվեցի, որ նա բոլորովին առողջ է, քիչ մրսել է և քիչ էլ հաղում... Այդ ոչինչ...

Ճաշի սեղանի շուրջը նստած էինք. ընտանիքն էր միայն. միակ օտարը ես էի, եթէ ես կարող եմ օտար լինել Գաբրիէլի ընտանիքում։ Նէման հրաւէրով՝ ես նստած էի տ. Սոֆիայի աջ կողմին ու նրան ծառայում էի։

— Որքան քաղաքավարի ու բարի է մեր նոր առաջնորդը։ Ես շատ շնորհակալ եմ նրանից, որ նա պատուեց Գաբրիէլիս յիշատակն ու այցելեց նրա գերեզմանը,—ասաց տ. Սոֆիան։

Նորից լռութիւն տիրեց... Սունդուկեանի ընտանիքում սուգ չը կար. ընտանիքի ողբը նկատվում էր պատկառելի լռութեան մէջ...

Ես համարձակվեցի ընդհատել այդ լռութիւնը։

— Տիկ. Սոֆիա, ես ինձ թոյլ եմ տալիս բարձրացնել բաժակս և յարգել Գաբրիէլի անմոռանալի յիշատակը... Նա մեռած չէ, նրա հոգին այժմ այստեղ մեզ մօտ է. տեսէք ինչպէս նա նայում է մեզ վրա պատից կախված պատկերից իր բարի հայեացքով...

Ամենքս ոտքի ելանք։ Տիկնոջ ու երեխաների աչքերից ընկան մի-մի հատիկ արտասուքի լուռ կաթիլներ... Այդ կաթիլներից մէկը երկար ժամանակ փայլում էր Գաբրիէլի աւագ թոռ օր. Հեղինէի չքնաղ այտի վրա։

— Վասո, ինձ որ թաղէք, իմ և Գաբրիէլի միջև եղած գերեզմանապատը կը մնայ, թէ ուրիշ պատ պիտի բարձրացնեն։

— Ոչ, տիկ. Սոֆիա, ուրիշ պատ այլևս պէտք չի լինի, միայն թաղի սկիզբը կը դրվի Գաբրիէլի պատի վրա...

Ամենքի տրամադրութիւնը վատացաւ, ես զգում էի, որ մի հանաք անհրաժեշտ էր ընտանիքը հանգստացնելու համար։

— Ինչ ես կարծում, Գիգօ,—դիմեցի ես տիկնոջ աւագ որդուն,—աւելի լաւ չի լինի, որ մէջտեղի պատը քանդենք։

— Ոչ,—ասաց տիկինը,—միայն մէջտեղը մի պատուհան թողէք, որտեղից նա ինձ կը կարդայ իր նոր գրուածքները։

Ամենքը ժպտացին... ես այդ խօսակցութիւնից խորշում էի։ Ես առաջարկեցի ընդհատել այդ չարագուշակ խօսակցութիւնը։ Ամենքը ինձ հետ համաձայնեցին։ Մենք սեղանատնից անցանք հիւրասենեակը, բայց խօսակցութիւնը դարձեալ գերեզմանի շուրջն էր պտտվում... ես փորձեցի գնալ, տիկինը պահանջեց մնալ և առաջարկեց նստել իր կողքին բազմոցի վրա։

— Դեռ Գաբրիէլի պատկերը պատի վրա, ինչպէս նա ինձ է նայում, կարծես ինձ կանչում է. «Սոֆի, արի քեզ կարդամ այս կտորը... հաւանում ես»։

— Նէման, ես չեմ ուզում, որ ինձ մի քահանայ ուղեկցէ. պէտք է հրաւիրել Վանքի միաբանքը...

— Մայրիկ, դու անուղղելի ես. դադարիր. տեսնում ես՝ ամենքի ջղերը լարվում են...

— Իսկ իմոնք ոչ։ Ես կամենում եմ, որ անպատճառ լինի դիակառք և հէնց մեր դռան մօտ դադար դնեն դիակառքի վրա. մարդիկ նեղանում են դադարը տանելով, իսկ ես չեմ ուզում ծանոթներիս ու բարեկամներիս նեղութիւն պատճառել... Վասո Զատկին անպատճառ գաս մեզ մօտ ճաշելու. այդ օրը դու ազատ կը լինես։

— Ազատ կը լինեմ և շատ բաղդաւոր դարձեալ մի օր ձեր ընտանիքի մէջ անցկացնել...

— Անպատճառ գաս։

— Անպատճառ...

* * *

Համեստ լռութիւն

Վիթխարի թթենու դիմաց համեստաութեամբ շարժում է իր կանաչազարդ փաթ-

ՍԵՐԲ-ԲՈԼԳԱՐԱԿԱՆ ՄԱՔԱՌՈՒՄՆԵՐԸ

—

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

9 ապրիլի

Բէլգրադ.—«Պոլիտիկան» գրում է. «Սերբ-բոլգարական պայմանագիրը կապելու ժամանակ երկու կողմերն էլ յայտնեցին իրանց զօրքերի թիվի մասին, որի համապատասխան էլ ուրուագծվեց Հին-Սերբիայի և Մակեդոնիայի բաժանումը իրար միջև և որոշվեց միացեալ գործողութիւնների ծրագիրը։ Ճիշդ յայտնի է, որ,—ասում է լրագիրը,—բոլգարները հանդէս բերին աւելի քիչ զօրք, քան պայմանաւորված էր պայմանագրով։ Բոլգարները պարտաւորվեցին օգնել սերբերին 100,000 զինուորով, բայց չը կատարեցին այդ պայմանը և պահանջեցին Թրակիայի համար սերբական երկու զօրաբանակ և արտիլերիա մթերքներով։ Բոլգարները միակողմանի են մեկնում պայմանագիրը և աշխատում են մեղադրել Սերբիային դրժման մէջ»։ Լրագիրն առաջարկում է հրատարակել պայմանագիրը, որպէսզի վերջ դրվի դաշնակցի անլօյալ զրպարտութիւններին։

Առևտրականների և արդիւնաբերողների ժողովը միաձայն հաւանութիւն տուեց առևտրական պալատների վճռին՝ բոյկոտի ենթարկելու աւստրիական ապրանքները։

Սկուտչէնայում վիճաբանում են 1912 թուի բիւջէն 1913 թուի համար պահելու մասին։ Նացիոնալիստ Պէշիչովիչը խօսեց օրինագծի դէմ։ Ի նկատի ունենալով կառավարութեան քաղաքականութեան անորոշութիւնը, որով կարելի է աւելի շուտ պատերազմ սպասել Բոլգարիայի հետ, քան հաստատ դաշնակցութիւն, Պաշիչը պատասխանեց, որ կառավարութեան քաղաքականութիւնը որոշ է. նա պաշտպանելու է երկրի շահերը ամեն տեսակ յարձակումներից, որտեղից էլ որ նրանք առաջ գան։ Առաջին ընթերցման ժամանակ օրինագիծն ընդունվեց 74 ձայնով ընդդէմ 60-ի։

Արտաքին գործերի մինիստրութեան մէջ տեղեկութիւններ են ստացվել, որ սերբ զօրքերի հեռանալուց յետոյ առնաուտների մէջ յուզմունք է սկսվել։

ՀԱՇՏՈՒԹԵԱՆ ՆԱԽՕՐԵԱԿԻՆ

—

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

9 ապրիլի

Կ. Պոլիս. — Իզզէթ-փաշան վերադարձաւ Գալիպոլիից, ուր նա ստուգեց համաձայնութիւն կապեց սերբ և յոյն պատգամաւորների հետ պատերազմական գործողութիւնները դադարեցնելու մասին։

Բ. Դրան շրջաններում պնդում են, որ վաղը Լենդոնում կը ստորագրվի նախնական հաշտութեան պայմանագիր։

—

Աթէնք.—Դաշնակիցների պատասխանը նոտան յանձնվեց երեկոյեան։

Սոֆիա. — Դաշնակիցների պատասխանը նոտան յանձնվեց մեծ պետութիւնների ներկայացուցիչներին։

—

Բէլգրադ.—Ապրիլի 8-ին Պաշիչը յանձնեց մեծ պետութիւնների ներկայացուցիչներին հետևեալ պատասխան նոտան. «Դաշնակիցները վկայում են, որ միջնորդութեան պայմանները մասամբ տարբերվում են մարտի 23-ին իրանց պատասխանի մէջ ձևակերպած պայմաններից։ Սակայն, դրված միջնորդութեան նպատակի իրագործումը դիւրացնելու ցանկութիւնից, դաշնակիցները նորից խնդրում են ընդունել սկզբունքով պատերազմական տուգանքը և ընդունում են միջնորդութեան առաջարկութիւնը, իրանց իրաւունք վերապահելով բանակցութիւնների ժամանակ քննութեան ենթարկել մեծ պետութիւնների մատնակցութեամբ Եդէյեան կղզիներին և Թրակիայի և ամբողջ Ալբանիայի սահմանները վերջնականապէս որոշելուն վերաբերեալ հարցերը։

Ի նկատի ունենալով, որ օպպոզիցիան անջատվեց կառավարութիւնից բիւջէի հարցում, սկուտչէնայի երկու փոխ-նախագահները և քարտուղարները, որոնք պատկանում են օպպոզիցիոն կուսակցութիւններին, հրաժարվեցին։

Լենդոն.—Ռէյտէրի տեղեկութիւնների համաձայն, դաշնակիցների պատասխանը դիպլոմատական շրջաններում թողել է նպաստաւոր տպաւորութիւն։ Եկող չորեքշաբթի օրը դեսպանաժողովը կը քննէ դաշնակիցների պատասխանը։ Հաշտութեան կոնֆերէնցիայի գումարման տեղը տակաւին յայտնի չէ։

—

Լենդոն.—Զերնոգորական պատգամաւոր Պապովիչը յայտնեց Ռէյտէրին, որ մեծ պետութիւնների առաջարկը՝ փոխադրութիւն տալու Զերնոգորիային՝ վերջնի մէջ առաջ է բերում գայրոյթ. մինչև որ Զերնոգորիայի սահմանների մէջ չը մտնվի Սկիւտարի լիճը, Զերնոգորիայի բռնած դիրքը չի փոխվի. Ցէտինիէն ըստ երևոյթին չէ զրաված է, որովհետև Պապովիչը ուրբաթ օրից հեռագիր չէ ստացել։

Ռէյտէրը հաղորդում է, որ դեսպանները խորհրդակցեցին երկու ժամ։ Հետևեալ նիստը կը կայանայ հինգշաբթի։

Զերնոգորիայի նկատմամբ դրութիւնը չէ փոխվել։

«Թայմսին» հեռագրում են Ցէտինիէից, որ կառավարութեան կարգադրութեամբ բոլոր յարաբերութիւնները խզված են Եւրոպայի հետ։ Պոստը չէ մեկնում, հեռագիրը չէ գործում, ճանապարհորդներին թոյլ չէ տրվում դուրս գալ երկրի սահմաններից։

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ

ԼՈՒՐԵՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ ՄԱՍԻՆ

—

Կ. Պոլսի թիւրքաց լրագիրները գրգռված են Հայաստանում կատարվող ռուսական ագիտացիայից։ Լրագիրները հաղորդում են, որ իբր նոյնիսկ «Դաշնակցութիւն» կուսակցութիւնը ագիտացիա է մղում յօգուտ Ռուսաստանի։

—

Լենդոնից հեռագրում են, որ Ռուսաստանը ներկայումս եռանդով զբաղված է հայկական հարցով։ Այն միտքը, թէ չը պէտք է խառնվել Թիւրքիայի փոքր-ասիական գործերին, մի կողմն է դրված։ Եթէ Թիւրքիան անկարող լինի վերջ դնել քիւրդերի յարձակումներին, այն ժամանակ Ռուսաստանը ձեռք է առնելու վճռական քայլեր։

Թիւրքիան, սարսափելով ռուսական զրաբերի անվրէպութիւնից, դեպի կովկասեան սահմանը, պատուիրեց Պետերբուրգի իր դեսպանին իրազեկ լինել բոլոր պատճառների մասին։

—

Թիւրքաց մեծ վէզիրը ստացաւ մի յուշագիր, որով պահանջվում է անկախութիւն տալ Քիւրդստանին։

ԱՍԻԱԿԱՆ-ԹԻՒՐՔԻԱՅԻ ԱՆՁԵՌՆՄԽԵԼԻՈՒԹԻՒՆԸ

—

Այս վերնագրով մի յօդուած է տպված «Pour les Peurles d'Orient»երկշաբթաթերթի վերջին (№ 9) համարի մէջ։

«Daily News»-ը և Վիէննայի մի քանի լրագիրներ իմացնում են մեզ, թէ երիտասարդ թիւրքական կառավարութիւնը մտադիր է խնդրել մեծ պետութիւններից՝ իբրև հաշտութեան պայմաններից մէնը երաշխաւորել Թիւրքիայի ասիական երկիրների եւ մասնաւորապէս իր արևելեան նահանգների անձեռնմխելիութիւնը, 30 տարվայ մի ժամանակամիջոցի համար։

Հաւատացնում են նոյնիսկ, որ Հակիզփաշան և Ջաւիդ-բէյը դիմումներ են արել այդ մտքով, առաջինը՝ Լենդոնում, երկրորդը՝ Բերլինում։

Որեմն խնդիրն ամենից առաջ արևելեան նահանգների, իմա հայկական նահանգների մասին է, որոնք ամենից շատ ենթարկված են մի օտար պետութեան կողմից յափշտակվելու վտանգին։

«Daily News», տնկաբանելով այս խոշոր լուրը, յարձակվում է խստօրէն թիւրք քաղաքագէտների վրա, որոնք Հայաստանի անձեռնմխելիութեան մասին ցանկալի հրաշխաւորութիւնը ստանալուց յետոյ կը ցանկան դարձնել նրանից մի տեսակ Կոնգո, ուր, ըստ հին սովորութիւնների, ոչ մի բարեփոխումն չի մտցվի, բայց և ոչ մի զանգատը նկատողութիւն չի առնվի, մի խօսքով հայերը, դարաւոր տանջանքներ կրելուց յետոյ մի զզուելի ըէժիմի ներքոյ, իրանց եղբայրներից հարիւր հազարներ զոհեցան։

Լենդոնից հեռագրում են, որ Ռուսաստանը ներկայումս եռանդով զբաղված է հայկական հարցով։ Այն միտքը, թէ չը պէտք է խառնվել Թիւրքիայի փոքր-ասիական գործերին, մի կողմն է դրված։ Եթէ Թիւրքիան անկարող լինի վերջ դնել քիւրդերի յարձակումներին, այն ժամանակ Ռուսաստանը ձեռք է առնելու վճռական քայլեր։

Թիւրքիան, սարսափելով ռուսական զրաբերի անվրէպութիւնից դեպի կովկասեան սահմանը, պատուիրեց Պետերբուրգի իր դեսպանին իրազեկ լինել բոլոր պատճառների մասին։

—

Թիւրքաց մեծ վէզիրը ստացաւ մի յուշագիր, որով պահանջվում է անկախութիւն տալ Քիւրդստանին։

ռիկ գլուխը համեստ լռութեան։

«Ինչ կը լինի,—մտածում էր նա,—եթէ այդ մեծ թթենին արագօրէն տարածէ ինձ վրա իր հսկայ ճիւղերը, զրկէ ինձ արևից և լոյսից, շողից ու խոնաւից և խեղդէ ինձ։ Այդ թթենին անհրաժեշտ է, նա զօրաւորում է հայկական բեմի անխախտ սիւնի պաշտելի շիրիմը. իսկ ե՞ս. ի՞նչ եմ ես, ո՞ւմ համար եմ ես պիտանի... Բայց ահա բերին և շուաքիս տակ դրին դրամատուրգի ամուսնու դագաղը։ Ինչպիսի բարի դէմք, մահվան կնիքը նրա վրա դրված չէ, կարծես նա ննջում է... խաչած ձեռքերը պատրաստվում են բարձրանալ բարիք գործելու համար։ Նա անհրաժեշտ է իր ամուսնու կողքին, ուրեմն անհրաժեշտ կը լինի և իմ շուաքը նրա գերեզմանի համար... թթենին չի կարողանայ ճնշել ինձ, խեղդել ինձ։

Մեղմ զեփիւռը շարժեց լորենու համեստ գլուխը, և նրա կանաչ և թարմ տերևներից արցունքի հատիկներ թափվեցին թանգագին ննջեցեալի դէմքի վրա, այնտեղից գլորվեցին դագաղը լցնող յակինթների փնջերի վրա և ողողեցին նրանց դիւրալի խոնաւով...

Գերեզմանի վրա բլրակ կանգնեց։ Ամենքը հեռացան։ Վանքի պարտէզում լռութիւն տիրեց։ Միայն ծառերի գագաթները, քամուց օրօրվելով, ողջունում էին միմեանց, իսկ կատաղի Կուրը իր պղտոր ալիքները միմեանց վրա կուտակելով, գոռալով վազում էր դէպի Պէտրէէ մօրեվը՝ Լօպիանի և Պէպոյի թմբերը պատառոտելու...

* * *

Տիկին Սօֆիա՝ Սունդուկեանի ուխտաւորները

Գաբրիէլը իւրաքանչիւր իր գրուածքը, իւրաքանչիւր տեսարանը մէկ առաջ և մէկ էլ յետոյ անպատճառ կարդում էր տ. Սոֆիային։

— Ի՞նչպէս ես գտնում։

— Շատ լաւ է, Գաբրիէլ, միայն այս մէկ տեսարանը չեմ հաւանում։

— Ինչի՞։

— Չեմ հաւանում։

— Պատճա՞ռը։

— Լաւ, Աստուած սիրես. ասում եմ, որ չեմ հաւանում. ես ի՞նչ գիտեմ ինչի՞. հեղինակը դու ես, այլ ոչ ես։ Ինքդ մտածիր։

— Լաւ, լաւ, Սօֆի, տուր ձեռքդ համբուրեմ։

Այնուհետև Սունդուկեանը մտածում էր այդ տեսարանի մասին, խորհրդակցում էր ինձ հետ, ուրիշների հետ և ինքնակամ ուղղում էր տեսարանը...

— Այսպէս աւելի լաւ չէ՞, Վասո։

— Աւելի լաւ է։

— Սպասիր, տեսնեմ իմ կրիտիկոսը ի՞նչ կասէ։ Սօֆի, արի։ Վասո, կարդայ ուղղած տեսարանը։

Ես կարդում էի։

— Մ՞յ այդպէս լաւ է,—ասում էր տ. Սօֆիան։

— Այդպէս ես էլ եմ հաւանում. հապա Սօֆի, ինչի՞ առաջ չասացիր, որ այսպէս ուզում։

— Ախար ես ինչ գիտէի, այսքանը միայն՝ առաջվանը չէի հաւանում, իսկ հիմա հաւանում եմ։ Պէէսան դու ես գրում, ես հօ չէ...

— Դէ տուր ձեռքդ համբուրեմ։

Գաբրիէլը չէրմ համբուրում էր իր աշխատակից ամուսնու ձեռքը։

Սունդուկեանի ձեռագիրների մէջ կը գտնէք տ. Սօֆիայի ձեռագիրներ բազմաթիւ թերթեր, որոնց հանգուցեալ հեղինակը թելադրել էր ամուսնուն։

Ծառայութիւնը շատ ժամանակ էր խլում Գաբրիէլից։ Եթէ նա չը ծառայէր և հասարակութիւնը նրան միջոցներ տար, ինչպէս այդ լինում է ուրիշ ազգերի մէջ, նրա գրուածները 100 անգամ աւելի կը լինէին։ Ընդհակառակը նա իր ծախսի կոտորակային թւերով մասը յետ չէր ստանում։

Սունդուկեանի համար անհրաժեշտ էին հայ դերասաններ ու դերասանուհիներ և վերջինների համար անհրաժեշտ էր Գաբրիէլը. բայց Գաբրիէլի, Գէորգ Զմշկեանի, Միհրդատ Ամերիկեանի կուռները անվերջանալի էին։ Տ. Սօֆիան ամեն բան հարթում էր։

— Բարև, Միհրդատ,—ասում էր նա Ամերիկեանին, պատահելով նրան փողոցում։—Էդ ինչ է, ոտքդ յետ ես խփել, էլ մեր

լուց յետոյ, իրանց կը տեսնեն մի նոր տարկու�եան մէջ, աւելի զարհուրելի, ուր նոյն իսկ իրաւունք չեն ունենայ կոչուիլ անել Եւրոպայի կենտրոնին, ուղղել իրանց բողոքները Եւրոպային...

«Daily News»-ը իրաւունք ունի։ Երիտասարդ-Թիւրքերը կը ցանկային, ինչ գնով և լինի թօթափել իրանցից այդ 61-րդ յօդուածը, որը, չը նայած իր անվնաս և անպտուղ բնաւորութեան 35 տարիներից ի վեր, նրանց համար ծանր հոգսերի առարկայ է, մշտական աղբիւր օտարների առաջադրութիւնների և միջամտութիւնների։

Եւ դրա փոխարէն ինչ են առաջարկում հայերին։ Ի՞նչ են առաջարկել 4 տարուց ի վեր՝ զոհացումն տալու համար հայկական այդ ամենից շատ վնասած ազգաբնակութեան ամենահիմնաւոր կարիքներին, ամենաօրինաւոր պահանջներին։ Ոչինչ բացի խոստումներից և ըէֆօրմների ծրագիրներից, որոնք դատապարտած են երբեք դուրս չը գալու Բ. Դռան արխիվներից։

Խնդրելով մեծ պետութիւններից հաշտաւորել հայկական նահանգների անձեռնմխելիութիւնը 30 տարվայ մի շրջանի համար, Ժէօն-Թիւրք քաղաքագէտները մտածում են երևի, որ այդ 30 տարիների ընթացքում Թիւրքական ըէժիմը, գործադրելով առանց կոնտրոլի և կողոպտման, ընչման իր սովորական մեթոդներով, կարող է դատարկել Հայաստանը իր առաջին բնակիչներից, ջարդել, ոչնչացնել մի անգամ ընդմիշտ այդ հայ տարրը, որի վրա Թիւրքական անուղղելի կարճատեսութիւնը նայում է իբրև թշնամու, բայց որը վերածնութեան մի հզօր գործօն է անատոլիական այդ ընդարձակ երկիրներում, որտեղ պահանջում են միայն գոյութեան և իրանց աշխատանքի պտուղը վայելելու իրաւունք, իրանք ևս ամրապէս կապված լինելով կայսրութեան ամբողջութեան սկզբունքին։

Մենք յոյս ունենք, որ Եւրոպական դիպլոմատիան նպաստաւոր ընդունելութիւն չի տուի Թիւրքական այդ առաջարկներին առանց փոխադարձաբար պահանջելու լուրջ երաշխաւորութիւններ հայկական ըէֆօրմների համար։ Մենք յոյս ունենք, որ Մեծ-Բրիտանիայի պետական մարդիկ չեն կամենայ վերսկսել Լորդ Բիկոնսֆիլդի աւանդութիւնը և քաւել չեն տայ հայ ժողովրդին Կիպրոսի մի նոր դաշնագրի ոճիրը։

Մենք ևս պահանջում ենք, որ երաշխաւորեն Ասիական Թիւրքիայի անձեռնմխելիութիւնը։ Բայց մենք պահանջում ենք այդ մի պայմանով—վերանոր գցեցէք Հայաստանը։ Դա է միակ միջոցը երաշխաւորելու մի անգամ ընդմիշտ հուսկաւոր «ամբողջութիւնը»։ Բայց այդ sine qua non պայմանը կարող է իրագործվել միայն Եւրոպայի աջակցութեամբ և կոնտրոլով։

Ֆրանսիական հայասէր թերթի նոյն համարում, յայտնի քաղաքական գործիչ Ֆրանսիս դը Պրէսանսէն «Դիլեմմա» վերնագրով մի առաջնորդող յօդուածով խօսելով դարձեալ հայոց հարցի մասին՝ նոյնպէս այն միտքն է յայտնում, թէ Ասիական Թիւրքիայի ամբողջութեան և անձեռնմխելիութեան երաշխաւորութիւնը անհրաժեշտ է միայն այն պայմանով, որ հայկական ըէֆօրմները իրագործվեն։ Ահա այս հայեցակէտի դէմ մենք կը կամենայինք խօսել։

Պէտք է այլ ևս համոզվել, որ Թիւրքաց կառավարութիւնը ընաւ չի համաձայնվի ոչ մի ըէֆօրմ մտցնել Անատոլիայի արևելեան կամ հայկական նահանգների մէջ։ Չի համաձայնի, որովհետև նա անկարող է. այդ անկարողութիւնը ապացուցված է Թիւրքիայի պատմութեամբ և Թիւրք ժողովրդի հոգեբանութեամբ։ Իսլամութիւնը անթոյլատրելի է համարում իրաւունքների հաւասարացումը ոչ-իսլամների հետ։ Եթէ Թիւրքական կառավարութիւնը աշխատում է ձեռք բերել երաշխաւորութիւն, որ 30 տարի ոչ ոք չանհանգստացնի իրան, ոչ ոք չը պահանջի իրանից ըէֆօրմներ մտցնել Հայաստանի մէջ, այդ պահանջը նա, անշուշտ, նրա համար չէ անում, որ ինքը 30 տարվայ ընթացքում բարեկարգ հայկական նահանգները. ոչ. այդ պահանջը նա անում է, որպէսզի կարողանայ 30 տարվայ ընթացքում բոլորովին բնաջինջ անել հայ տարրը այդ երկրում, որից յետոյ, նրա կարծիքով, այլ ևս ոչ ոք պահանջ չի անի ըէֆօրմներ մտցնելու։ Արդ, երբ մի իշխանութիւն, մի պետութիւն այդպիսի անգութ և բարբարոս հայեացք ունի ու այդպիսի դաժան նպատակի է ձգտում, արժէ՞ արդեօք հոգս տանել, մտածել նրա ամբողջութեան կամ անձեռնմխելիութեան մասին։ Ով և տիրապետի Անատոլիային, հարազատիկ աւելի լաւ կը լինի Թիւրք իշխանութիւնից. ինքը Թիւրք ժողովուրդը աւելի երջանիկ և բարեբաստ կը լինի։ Եթէ Ֆրանսիայի, Գերմանիայի, Անգլիայի շահերը չեն թոյլատրում, որ Ռուսստանը տիրապետէ Հայաստանին և դրանով վերջ տայ հայ ժողովրդի մի կուլտուրական և քրիստոնեայ տարրի - տանջանքներին, թող տիրապետեն այդ երկրին մի այլ ազգի, թող վերջապէս, մի հնարք մտածեն ազատելու երկիրը Թիւրքական բռնակալ լծից։ Պնդել Թիւրքիայի ասիական երկիրների անձեռնմխելիութեան և ամբողջութեան պահպանութեան վրա՝ դա նշանակում է թողնել յարատևել կոտորածների, ջարդերի, վայրագութիւնների, աւազակութիւնների ըէժիմը. դա նշանակում է թոյլ տալ տանակոխ անել քաղաքակրթութիւնը, արդարութիւնը։

Հ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՕԳՆՈՒԹԵԱՆ ՊԷՏՔԸ

Բաղկանեան պատերազմում գերի ընկած հայ զինուորները, ինչպէս գրել էինք կիրակի օրվայ «Մշակում», ազատվել են և նրանցից մի քանի խումբ եկել են Բաթում և Թիֆլիս և մտադիր են հայրենիք վերադառնալ, բայց դրամ չունեն, ճանապարհածախս չը կայ։

Մենք արդէն մի անգամ դիմեցինք հայ հասարակութեանը, ցոյց տալով օգնութեան պէտքը այս ազատված գերիների համար. այսօր էլի ստիպված ենք կրկնել այդ կոչը, որովհետև դեռ չէ ամօքված ցաւը, օգնութիւն չէ հասցված տակաւին։

Ազատված գերիները, բրուտացի և սասունցի առողջ երիտասարդներ, օր առաջ ցանկանում են հայրենիք վերադառնալ և պաշտպան կանգնել իրանց վաթանին։ Կ. Հ. Բարեգ. Ընկերութիւնը նրանց խոստացել է միայն երկաթուղու տոմսակի փողը տալ մինչև Կարս. այնտեղից մինչև հայրենիք գնալու և այստեղ ապրելու այդ պանդուխտները ոչինչ չունեն. օրերով անօթի են անց կացնում։ Նրանցից մէկը այսօր էլի «Մշակի» խմբագրատուն մտաւ, նկարագրեց իրանց թշուառ դրութիւնը և ասաց, որ ապրում են Վանքի եկեղեցու մօտ մի ողորմելի անառում և սոված, անօթի սպասում են՝ մինչև որ մէկ բարեսիրտ կը տայ նրանց ցամաք հացի համար մի քանի կոպէկ։ Ե՞րբ պէտք է գայ այդ մի քանի կոպէկը։

— Ուղարկեցէք մեզ, տուէք մի քանի ռուբլի, որպէսզի կարողանանք գնալ մեր երկիրը,—ասում են մեզ ազատված գերիները։

Մեզ թւում է, որ Կ. Հ. Բարեգ. Ընկերութեան անմիջական պարքն է լրջօրէն մտածել այս հարցի մասին, կազմակերպել այս գաղթականների վերադարձը։

Տալ նրանց մի քանի ռուբլի ճանապարհածախս և ասել թէ գնացէք Կարս—դա նշանակում է գլխից ոռդ անել։ Բարեգործական Ընկերութիւնը աշխատել է ստանալ փոխարէն Գաբրիէլը հոնռաղով բարձր ծիծաղում էր...

— Ah, ma chère Sophie,—ասում էր նրան, համբուրելով ձեռքը։

* *

Պատռած Պէպօն

Պատրաստում էինք «Պէպօի» առաջին ներկայացումը։ Ես յուշում էի։ Փորձերը կատարվում էին Սունդուկեանի ընակարանում՝ Բաղդասար Մօսրօեվի անտառում, Դանովսկայա փողոցի վրա։ Գաբրիէլի ու Գէորգի մէջև ինչ-որ սև կատու անց կացաւ։ Գաբրիէլը շտապով անցաւ ինձ մօտ, ձեռքիցս առաւ «Պէպօի» ձեռագիրը և պատռեց։ Այդ ըօպէին դահլիճ մտաւ տ. Սօֆիան, որին հանում էր ծառան թէյի բաժակներով լի մատուցարանը ձեռքին։

— Գէորգ,—դիմեց նա Զմշկեանին,—եկէք ինձ հետ, անցնենք սեղանատուն և միասին թէյ խմենք։

Նա շտապով առաւ Գէորգի ձեռքը և նրա հետ անցաւ սեղանատուն։ 10 ըօպէից յետոյ նա վերադարձաւ դահլիճ և առնելով ամուսնու ձեռքը տարաւ նրան սեղանատուն։

— Վերջապէս դու տանտէր ես, իսկ նա քո հիւրը,—ասում էր տ. Սօֆիան ֆրանսերէն։

Մի քառորդ ժամից յետոյ թաթեւ տրված դուրս եկան Գաբրիէլն ու Գէորգը։ Փորձը շարունակվեց։

«Պէպօի» առաջին ներկայացումից զըլխաւոր դերակատարները ստացան 64-ական ռուբլի։ Այդ առաջին անգամն էր, որ Գիքօյի դերը կատարող Գէորգ Միրաղեանը առաջնակարգ դերակատարների հետ հաւասար մաս ստացաւ։

Միրաղեանը իր մասից ինձ նուիրեց 3 ռուբլի, միրգ առնելու համար։

Սունդուկեանը դրամի մասին երբէք չէր միջամտում։

* *

Վերջին տեսութիւնը

Սունդուկեանի մահվանից ճիշդ 6 օր առաջ ժամը 7-ին ես հրաւիրված էի նրա մօտ «Կտակը» պիէսան կարդալու։ 6 ժամ 58 ըօպէին պակաս ես տուն դնդը։ Ինձ դիմաւորեց Գաբրիէլը և գրկելով ասաց.

— Զանգը տալուն պէս իմացայ, որ դուն ես։ Միշտ ճշդապահ պէտք է լինել և չը ստիպել մարդկանց նշանակած ժամանակից աւելի սպասել։

— Դա ձեր աւանդն է, և ես միշտ նրան հետևում եմ։ Գիտէք, պէտք է պիէսը ես ինքս կարդամ, իսկ դուք լսէք։ Դուք կը յոգնէք։

— Լաւ, միայն մի երկու տեսարան ինքս կը կարդամ։

— Պարոն, տիկինը մի ըօպէով ձեզ խնդրում է։

Եւ իսկոյն դուրս եկայ դրասենեակից։

— Վանս,—ասաց տ. Սօֆիան, թոյլ չը տաս, որ Գաբրիէլը իւքը կարդայ պիէսը. նա շատ է յոգնում։

— Ես արդէն այդպէս էլ խնդրել եմ Գաբրիէլից։

Կարդացի պիէսան, ասացի կարծիքս և Գաբրիէլին գրկելուց ու համբուրելուց յետոյ մեկնեցի. դա մեր վերջին տեսութիւնն էր։

— Ի՞նչպէս դուր նրան,—հարցրեց ինձ տ. Սօֆիան։

— Նա շատ աշխոյժ է, և յոյս ունեմ, որ մի երկու պիէս նա էլի ինձ կը թելադրի,—ասացի ես, իսկ ինքս մտածում էի. «Նրա օրերը համրված են»։

Այդ օրից ամեն օր սպասում էի Գաբրիէլի մահվան լուրը ստանալու...

Նոյնը չեմ կարող ասել տ. Սօֆիայի մասին։ Նա այնքան աշխոյժ էր, որ կարող էր դարձեալ մի 10 տարի ապրել...

Հանգիստ ոսկորներդ, օրինակելի դուստր, պարտաճանաչ ամուսին, սիրող և կրթող մայր, խաղաղասէր ու հաշտեցնող մարդ և անկաշառ բարեկամ...

Շուտ-շուտ կայցելեմ երկուսիդ գերեզմանը. մեղմ զեփիւռը կը շարժէ լորենու համեստ գլուխը և նրա տերևների արցունքները, խառնվելով իմ արցունքների հետ, կը թրջեն գերեզմանիդ հողային բլրակը...

Ց. Տէր-Գրիգորեան

*) Ներկայ յօդուածը հանդուցեալ Էմմանուէլ քահ. Նազարեանն անցեալ տարի ուղարկել էր խմբագրութեանս ազգ հինգշաբթի օր հրատարակելու համար, բայց յօդուածը ստացվել էր աւելի ուշ, ուստի նա չը տպագրվեց, և մենք յետաձգեցինք նրան մինչև այս տարի։ Տպագրելով այժմ համեմի է վերյիշել հանգուցեալ ժրաջան մեր աշխատակցի յարգելի անձնաւորութիւնը։ Խմբ.

դիմաւորեց հոգս տանել, մտածել նրա ամբողջութեան կամ անձեռնմխելիութեան մասին։ Ով և տիրապետի Անատոլիային, հարազատիկ աւելի լաւ կը լինի Թիւրք իշխանութիւնից. ինքը Թիւրք ժողովուրդը աւելի երջանիկ և բարեբաստ կը լինի։ Եթէ Ֆրանսիայի, Գերմանիայի, Անգլիայի շահերը չեն թոյլատրում, որ Ռուսստանը տիրապետէ Հայաստանին և դրանով վերջ տայ հայ ժողովրդի մի կուլտուրական և քրիստոնեայ տարրի - տանջանքներին, թող տիրապետեն այդ երկրին մի այլ ազգի, թող վերջապէս, մի հնարք մտածեն ազատելու երկիրը Թիւրքական բռնակալ լծից։ Պնդել Թիւրքիայի ասիական երկիրների անձեռնմխելիութեան և ամբողջութեան պահպանութեան վրա՝ դա նշանակում է թողնել յարատևել կոտորածների, ջարդերի, վայրագութիւնների, աւազակութիւնների ըէժիմը. դա նշանակում է թոյլ տալ տանակոխ անել քաղաքակրթութիւնը, արդարութիւնը։

Հ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՕԳՆՈՒԹԵԱՆ ՊԷՏՔԸ

Բաղկանեան պատերազմում գերի ընկած հայ զինուորները, ինչպէս գրել էինք կիրակի օրվայ «Մշակում», ազատվել են և նրանցից մի քանի խումբ եկել են Բաթում և Թիֆլիս և մտադիր են հայրենիք վերադառնալ, բայց դրամ չունեն, ճանապարհածախս չը կայ։

Մենք արդէն մի անգամ դիմեցինք հայ հասարակութեանը, ցոյց տալով օգնութեան պէտքը այս ազատված գերիների համար. այսօր էլի ստիպված ենք կրկնել այդ կոչը, որովհետև դեռ չէ ամօքված ցաւը, օգնութիւն չէ հասցված տակաւին։

Ազատված գերիները, բրուտացի և սասունցի առողջ երիտասարդներ, օր առաջ ցանկանում են հայրենիք վերադառնալ և պաշտպան կանգնել իրանց վաթանին։ Կ. Հ. Բարեգ. Ընկերութիւնը նրանց խոստացել է միայն երկաթուղու տոմսակի փողը տալ մինչև Կարս. այնտեղից մինչև հայրենիք գնալու և այստեղ ապրելու այդ պանդուխտները ոչինչ չունեն. օրերով անօթի են անց կացնում։ Նրանցից մէկը այսօր էլի «Մշակի» խմբագրատուն մտաւ, նկարագրեց իրանց թշուառ դրութիւնը և ասաց, որ ապրում են Վանքի եկեղեցու մօտ մի ողորմելի անառում և սոված, անօթի սպասում են՝ մինչև որ մէկ բարեսիրտ կը տայ նրանց ցամաք հացի համար մի քանի կոպէկ։ Ե՞րբ պէտք է գայ այդ մի քանի կոպէկը։

— Ուղարկեցէք մեզ, տուէք մի քանի ռուբլի, որպէսզի կարողանանք գնալ մեր երկիրը,—ասում են մեզ ազատված գերիները։

Մեզ թւում է, որ Կ. Հ. Բարեգ. Ընկերութեան անմիջական պարքն է լրջօրէն մտածել այս հարցի մասին, կազմակերպել այս գաղթականների վերադարձը։

Տալ նրանց մի քանի ռուբլի ճանապարհածախս և ասել թէ գնացէք Կարս—դա նշանակում է գլխից ոռդ անել։ Բարեգործական Ընկերութիւնը աշխատել է ստանալ փոխարէն

մասնաւորից Գաբրիէլը և գրկելով ասաց.

— Զանգը տալուն պէս իմացայ, որ դուն ես։ Միշտ ճշդապահ պէտք է լինել և չը ստիպել մարդկանց նշանակած ժամանակից աւելի սպասել։

— Դա ձեր աւանդն է, և ես միշտ նրան հետևում եմ։ Գիտէք, պէտք է պիէսը ես ինքս կարդամ, իսկ դուք լսէք։ Դուք կը յոգնէք։

— Լաւ, միայն մի երկու տեսարան ինքս կը կարդամ։

— Պարոն, տիկինը մի ըօպէով ձեզ խնդրում է։

Եւ իսկոյն դուրս եկայ դրասենեակից։

— Վանս,—ասաց տ. Սօֆիան, թոյլ չը տաս, որ Գաբրիէլը իւքը կարդայ պիէսը. նա շատ է յոգնում։

— Ես արդէն այդպէս էլ խնդրել եմ Գաբրիէլից։

Կարդացի պիէսան, ասացի կարծիքս և Գաբրիէլին գրկելուց ու համբուրելուց յետոյ մեկնեցի. դա մեր վերջին տեսութիւնն էր։

— Ի՞նչպէս դուր նրան,—հարցրեց ինձ տ. Սօֆիան։

— Նա շատ աշխոյժ է, և յոյս ունեմ, որ մի երկու պիէս նա էլի ինձ կը թելադրի,—ասացի ես, իսկ ինքս մտածում էի. «Նրա օրերը համրված են»։

Այդ օրից ամեն օր սպասում էի Գաբրիէլի մահվան լուրը ստանալու...

Նոյնը չեմ կարող ասել տ. Սօֆիայի մասին։ Նա այնքան աշխոյժ էր, որ կարող էր դարձեալ մի 10 տարի ապրել...

Հանգիստ ոսկորներդ, օրինակելի դուստր, պարտաճանաչ ամուսին, սիրող և կրթող մայր, խաղաղասէր ու հաշտեցնող մարդ և անկաշառ բարեկամ...

Շուտ-շուտ կայցելեմ երկուսիդ գերեզմանը. մեղմ զեփիւռը կը շարժէ լորենու համեստ գլուխը և նրա տերևների արցունքները, խառնվելով իմ արցունքների հետ, կը թրջեն գերեզմանիդ հողային բլրակը...

Ց. Տէր-Գրիգորեան

կանգնում է մեր առաջ իր ամբողջ հայաքով, զրկանքների ու նահատակութեան փշեայ պսակը ճակատին։ Իրանց ժամանակին նրանք գործում էին աւելի մղձաւանջոտ պայմաններում, քան այսօրվայ սերունդը—և բժիշկը, և ուսուցիչը—քան այժմվայ բոլոր ինտելիգենտ այժերը, որոնք խորշում են գաւառից։ Նրանք կրում էին ամեն տեսակ նախատինքներ, բայց մնում անբիծ, շիտակ, հաւատարիմ ճշմարտին ու գիտութեանը, անկոչ՝ դատարակչի կոչմանը և հեղութեան ու համեստութեան կենդանի օրինակը ներկայացնում։

Այդպիսի դէմքերից մէկն էլ ներկայ յօբելեարն է։

Նրա յօբելեանը ունի և մի ուրիշ կարևորութիւն։

Դա Խարմանեանի գործունէութեան 25-ամեակը չէ միայն։

Դա նոյն գիւղի առաջադիմական ջանքերի 25-ամեակն է։

Գիւղի զարթնումի ու մտաւոր զարգացման տօնն է դա։

Եւ ներկայ տօնակատարութիւնը մի առիթ է յիշեցնելու տեղական արդի սերունդին անցած պատկառելի ճանապարհը, ցոյց տալու նրա լուսաւորութեան առաջին ջահակիրներին՝ աւելի բեղմնաւոր ու արդիւնարար կեանքի կոչելու համար։

Միշտ մոռացված, ոչ ոքից չը նկատված մի համեստ գաւառական ուսուցչի համար ինքն ըստ ինքեան մեծ վարձատրութիւն է շրջապատված տեսնել իրան իր հաւատացրած սերունդով և լսել ամեն կողմից եռախտագիտական զգացմունքի անկեղծ առհաւաստիաններ։

Ճանաչելով Մեղրին, նրա անտեսական աննախանձելի վիճակը՝ չենք կարծում, թէ յօբելեանը կազմակերպողները բարոյական վարձատրութիւնից զատ որևէ ակնկալութիւն ունենան հայրենի գիւղից։

Գիւղի տուածը երախտագիտական զգացմունքների սովորական արտայայտութիւնից դէնը հաղիւ թէ անցնի։

Մինչդեռ զառամած, ընտանիքով ծանրաբեռնված, օգնութեան կարօտ ուսուցչի համար պէտք է մի ուրիշ բան, աւելի ըէալ հատուցումն։

Նիւթական թեթև աջակցութիւն։

Ո՞վ կարող է տալ այդ աջակցութիւնը։

Գուցէ պանդխտութեան մէջ նիւթական ապահովութիւն ստացած մեղրեցիները արձագանք տան հայրենի գիւղի այդ տօնակատարութեանը։

Դա կը լինի շատ անշան։

Գուցէ էջմիածինը, եթէ իր տրամադրութեան տակ ունենար այդ նպատակով յատուկ ֆոնդ։

Կայ սակայն մի այլ հիմնարկութիւն, որը կոչված է հէնց դրա համար, որը յատուկ պարտականութիւն է յանձն առել իր վրա և կարող է ի կատար ածել։

Այդ հիմնարկութիւնը Կ. Հ. Բ. Ընկերութեան կից կազմված ուսուցչական ֆոնդն է։

Պէտք է յուսալ, որ այդ մարմինը, երբ կազմակերպվի վերջնականապէս, երբ սկսի իր գործունէութիւնը, առաջին իսկ հոգսերի թւում ուշադրութեան կառնի ներկայ յօբելեարին, ոչ սոսկ իբրև յօբելեարի, այլև իբրև նպատակի կարօտ մի ուսուցչի։

Եւ կը տայ իր օգնութիւնը թէ իբրև վարձատրութիւն նրան և թէ իբրև խրախոյս յետնորդ սերունդի։

Անկախ վերոյիշեալներից՝ հայ հասարակութեան ուշադրութեանն ենք յանձնարարում ներկայ յօբելեանը։

Լ. Դ.

ՊԻՂԱՏՈՍԻ ՎԵՐՋԻՆ ՕՐԵՐԸ *)

(Ինչի մէջ է երջանկութիւնը)

Երևի շատերին յայտնի կը լինի, որ Ցիսուսի ժամանակները Հրէաստանն ընկած էր հռոմայեցոց ձեռքը, կորցրած լինելով իր քաղաքական անկախութիւնը։ Ու Հռոմը իր կողմից Հրէաստանում կարգած դատաւորի ձեռքով կառավարում էր երկրի քաղաքական գործերը, թողնելով կրօնականները հրէից քահանայապետներին։

Յայտնի կը լինի նոյնպէս, որ Ցիսուսին ճանաչել էին յանցաւոր, ինչպէս պնդում էին հրէայ ուսումնականներն ու քահանայապետները։ Ու այդ յանցաւորին դատում էր պոնտացի Պիղատոսը, որ դատաւոր էր կարգված Երուսաղէմում՝ հռոմայեցոց Տիբերիոս կայսրի կողմից։ Բայց Տիբերիոսը վերին աստիճանի կասկածոտ ու խիստ մարդ էր, ու նրա համար՝ ամենալաւ դատաւորը նա էր, ով շատ մարդկանց էր պատժում։

Ինչ վերաբերում է Պիղատոսին, նա Ցիսուսի հակառակորդներից չէր, բայց իբրև դատաւոր թոյլ էր վերին աստիճանի։ Ցիսուսի չարչարանքների պատմութիւնը ցոյց է տալիս, որ Պիղատոսը, ելնելով յարգանքով վերաբերվելով դէպի նրա թովիչ անձնաւորութիւնը, ամեն կերպ աշխատում է ազատ արձակել նրան։ Բայց նրան պակասում է մի փոքրիկ բան... վճռականութիւն։

Ու նա մէկ արդարացնում է Ցիսուսին այն յանցանքներում, որոնց մէջ նա մեղադրվում է. մէկ ցանկանում է, որ ազատութիւն տրվի նրան՝ մօտալուտ տօնի պատճառով. երբեմն ուզում է ազդել նրան մեղադրողների վրա, իբրև մի մարդու, որ արժանի է լինել նրանց թագաւոր. երբեմն ուզում է ճնշում գործ դնել նրանց սրտերի վրա՝ ցոյց տալով ժողովրդին արիւնոտված Ցիսուսը,—մի բան, որ կարող էր արցունքներ քամել տալ նայողների աչքերից. երբեմն էլ՝ յանձնելով նրա դատը Գալիլիայի կառավարիչ Հերոդէսին և այլն։

Մի խօսքով, որոշ վճիռ կայացնելու հարցում, դատաւորը շարունակ տատանվում է։ Բայց հրէայ ամբոխը աղաղակում է դատաւորի երեսն ի վեր. «Եթէ դու դրան չը դատապարտես մահվան, քեզ կը համարենք կայսրի թշնամի ու կը բողոքենք»։ Սոսկալի այդ ահարկու սպառնալիքից, նա ստորագրում է Ցիսուսի մահվան վճիռը և հրամայում է խաչել նրան, թէպէտ, լուանալով իր ձեռքերը ժողովրդի առջև, ցոյց է տալիս, որ Ցիսուսը մեղաւոր չէ։

Յամենայն դէպս, նա դատապարտեց անմեղին, փոխանակ նրան մինչև վերջը պաշտպանելու. ամբոխի սպառնալիքները չը պէտք է կասեցնէին նրան արդարութեան ճանապարհից։ Ասենք թէ, պահպանելով Ցիսուսի կեանքը, նա ենթարկվեր կայսրի բարկութեանը, ու դրա համար զրկվեր իր պաշտօնից. բայց, միևնոյն կողմից, նա կը վայելեր խղճի կատարեալ խաղաղութիւն։ Սակայն, որովհետև հակառակ գնաց իր խղճին, զրկվեց իր պաշտօնից, վարեց սատանական կեանք, մատնվեց բարոյական տանջանքների և հոգեկան սենսոր կողմից դատապարտվեց աքսորի. ու, ինչպէս պատմում են, վերջ դրեց իր կեանքին՝ ցած գլորելով իրան իր աքսորվայրի անտառի բարձունքներից։

Պիղատոսի վերջին օրերի պատմութիւնը ասում է. ինչպէս մեզնից իւրաքանչիւրս, այնպէս էլ դատաւորներին, որոնք ուղղակի պարտաւոր են հատուցանել ամեն մարդու՝ արդարութեամբ. «Երբէք չը վիրաւորես մէջդ բնակող հոգեոր պահապանիդ, դատաւորիդ, երբէք հակառակ չը գնաս խղճիդ, եթէ ոչ՝ կենթարկվես նրա տանջանքներին. տանջանքներ, որոնք կը թաւնաւորեն կեանքիդ բոլոր բաւականութիւնները»։

Սրանից հեշտ կարելի է եզրակացնել՝ որ միայն նա կարող է վայելել այդ բաւականութիւնները, ում խղճը հանգիստ է։ Ու դրա հակառակ՝ ոչ մի բարիք, ոչ մի վայելք չէ կարող ուրախութիւն պատճառել մարդուն, եթէ նրան անհանգստացնում է իր խղճը։

Ով մարդ, որևէ գործ կատարելուց առաջ ակնջ դիր՝ ինչ է ասում խղճդ, ու թանգ համարիր նրա թելադրանքները։ Իմացիր, որ խղճը՝ Աստուծու ձայնն է, որ ցոյց է տալիս, թէ ինչ պէտք է անենք ու ինչ չանենք։ Պատրաստ եղիր կորցնել ամեն բան, միայն թէ պահպանես խղճիդ հանգստութիւնը։

Երջանկութիւնը ամենից առաջ դրա մէջն է։

Ի. ք. Ն.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

◆ Տօների պատճառով «Մշակի» հետևեալ համարը, բաղկացած $1^1/_2$ թերթից, լոյս կը տեսնի կիրակի, ապրիլի 14-ի Զատկի օրը։

◆ Այսօրվանից կառավարական և հասարակական հիմնարկութիւններում զբաղմունքները դադարում են մինչև Զատկի երրորդ օրը։

◆ Թիֆլիսի քաղաքային վարչութեան զինուորակոչական տեսանում արդէն ձեռնարկված է կազմելու այն երիտասարդների ցուցակը, որոնք այս տարվայ հոկտեմբերին կանչվելու են զինուորական ծառայութեան։ Նրանք, որոնք վայելում են ընտանեկան կամ կրթական արտօնութիւն, պարտաւոր են այժմեանից դրաւոր կերպով յայտնել յիշեալ տեսանին։

◆ Ապրիլի 6-ին Թիֆլիսում տեղի ունեցած հեղեղը Օրթաճալայի այգեստէրերին պատճառել է մօտ 3000 ռուբլու վնաս։

◆ Երկրագործութեան դեպարտամենտի գլխաւոր կառավարիչ ստատսսեկրետար Կրիվօշէինը ապրիլի 8-ին այցելեց Վրաստանի էկզարխ Ինոկէնտի արքեպիսկոպոսին, փոխարքայի երկու օգնականներ գէներալ Շատիլովին և սենատոր Վատացին, փոխարքայի դիւանապետ Պետերսոնին, որոնք և գործեցին փոխ-այցելութիւն։ Ստատսսեկրետար Կրիվօշէինն փոխարքայի պալատում այցելեց նաև քաղաքագլուխ Ալ. Խատիսեանը։

◆ Ապրիլի 9-ին Կրիվօշէինը սենատոր Վատացիի, կովկասեան իր լիազօր Շաշկովսկիի և այլ պաշտօնեաների ուղեկցութեամբ այցելեց բուսաբանական այգին, ուր բացատրութիւն տուեց Բոլլովը։ Նոյն օրը Կրիվօշէինը այցելեց երկրագործութեան մինիստրի կովկասեան լիազօրի դիւանատունը, ուր վերջինս ներկայացրեց դիւանատան բոլոր պաշտօնեաներին։

◆ Փոխարքան թոյլատրել է Թիֆլիսի կանանց բարձր դասընթացքների փոխադարձ օգնութիւն գանձարանի վարչութեանը կազմել վիճակախաղ ապրիլի 19-ին զրօսանքի ժամանակ։

◆ Պետերբուրգից հեռագրում են, որ նոր ճանապարհների մասնաժողովը խօսեց այն մտքով, թէ ցանկալի է նոր երկաթու-

զագծեր կառուցանել Կովկասում։ Նկատելի է կայ կառուցանել գիծ Բորժոմից Կարս, այնուհետև մինչև Օլթի՝ Կարսի շրջանում, որ մօտաւորապէս 12 վերստ հեռաւորութեան վրա է գտնվում օսմանեան պետութեան Երզրումի վիլայէթից։

— «С. Пет. Вѣд.» թերթի մարտի 28-ի համարում (№ 70) տպված է Շահրիարի մի պատմուածքի — «Խիղճը վերածնվեց»— թարգմանութիւնը, որ կատարել է Մ. Ալլանվերդեանը՝ «Совѣсть возродилась», новелла Шахріара վերնագրով։ Ինչպէս յայտնի է, այդ նովէլան տպված է «Արօր» ամսագրի 1911 թ. № 1-ի մէջ։ Միաժամանակ տպված է Շահրիարի կենսագրութիւնը։

— Վաղը նշանակված է քաղաքային վարչութեան և դումայական տեխնիքական, էլեքտրաքարշի, ֆինանսական և վերաստուգիչ մանաժողովների միացեալ նիստը՝ էլեքտրաքարշը գնելու հարցի առիթով։

— Թիֆլիսի նահանգապետը հաստատել է Խարփուխ քաղաքամասի հասարակական ա-կումբի կանոնադրութիւնը։

— Թիֆլիսի Թիւրքաց զեներալ-հիւպատոս Ըմզի-բէյը ծառայութեան գործերով մեկնեց Պարսկաստան։

— Թիֆլիսի քաղ. վարչութեան առագ հաշուապահը առաջարկեց պարգև տալ քաղաքային ծառայողներից նրանց, որոնց ռոճիկները 75 բուբլուց պակաս է։ Վարչութիւնը մերժեց։

ԳԻՏՈՒԹ., ԳՐԱԿԱՆ., ԳԵՂԱՐ.

ՀԱՄԱԿՐԵԼԻ ԵՐԵԿՈՅԹ

Ապրիլի 18-ին նշանակված է նորաբաց Հայ Երաժշտական Ընկերութեան առաջին համերգային երեկոյթը։

Ծրագրի մէջ կան թէ հայկական երգեր և թէ եւրոպական երաժշտութիւն։

Նոյնպէս գրական մի բաժին բաղկացած է ոտանաւորներից։

Երաժշտական Ընկերութիւնը առաջիկայ երեկոյթով սկիզբն է դնում մի շարք երեկոյթների, որոնք պէտք է որոշ ծրագրով իրագործվեն աշնան և ձմեռվայ ամիսներում. նրանք պէտք է նպատակ ունենան ուսումնասիրել հայկական երգի և երաժշտութեան նիւթերը և ծանօթացնել հայ հասարակութեանը եւրոպական երաժշտութեան հետ, այլ և խրախուսել հայ երաժիշտներին դէպի արդիւնաւէտ գործունէութիւն գեղարուեստի այդ կարևոր ճիւղի մէջ։

Համակրելով Ընկերութեան նպատակներին՝ երաժիշտ Ալէքսանդր Սպէնդիարեանը խոստացել է աշնանը գալ Թիֆլիս և մասնակցել երաժշտական երեկոյթին, որը կը տրվի Ընկերութեան կողմից։

Ապրիլի 18-ի երեկոյթը գրաւիչ պէտք է լինի Թիֆլիսի հասարակութեան համար, որը աւելի վաղ քան հայութեան մի ուրիշ որը աւելի վաղ քան հայութեան մի ուրիշ բեկորը, սկսել է զարգացնել իր երաժշտական ճաշակը և ուրեմն պարտաւոր է զարկ տալ համակրելի գործին իր աջակցութեամբ։

Ն—ն

ՕՐՎԱՅ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

— Բևեռային երկիրները հետազօտող Կուկը անյուսալի կերպով հոգեկան հիւանդութիւն է ստացել։

— Լոնդոնում մի խումբ կանայք յարձակվեցին սուֆրաժիստուհիների միտինգի վրա և հարուածներ հասցրին մասնակցողներին։

— Բրիւսելում գործադուլը հսկայական ծաւալ է ստացել։

— Ռուսաստանը ակտիվ կերպով հանդէս է գալիս հաշտեցնելու համար բալկանեան դաշնակիցներին, որոնց սուր յարաբերութիւնները յանգելու են վերջ ի վերջոյ եղբայրասպան կռիւ յուրախութիւն Աւստրիայի։ Ֆրանսիան իր կողմից նախազգուշացրեց դաշնակիցներին, որ փոխառութիւնը տայ նրանց միմիայն այն դէպքում, երբ նրանք սիրով իրար մէջ կը բաժանեն նուաճած երկիրները։

— Աւստրիական պաշտօնական տեղեկութիւնից երևում է, որ բալկանեան պատերազմում սպանվել են չերնեան պատերազմում սպանվել են չերնեան պատերազմում սպանվել են 11,000, նօգոցիներից 6000, յոյներից 11,000, սերբերից 22,000 և բուլգարներից 80,000 մարդ։

— Մոնաստիրի և Քօփրիւլիի զանազան տեղերում ընդհարումներ են տեղի ունենում բուլգարների ու սերբերի և բուլգարների ու յոյների միջև։ Կոմանօվոյի մօտերը բուլգարները սպանել և վիրաւորել են 80 սերբերի և խլել են նրանց սայլերը։

— Սերբիայում բուլգարների դէմ սկված յուզմունքը հասնում է իր գագաթնակէտին։ Սերբիան 15 օրով զէնքի է կանչել զէնք կրող երիտասարդներին։

— Ալբանները խնդրում են ալբանական գահի թեկնածու նստեցնել Թիւրքպրինց Մէջիդին։

— Սենատի առաջին դեպարտամենտում քննվեց կոմսուհի Ս. Ա. Տոլստոյի բողոքագրով յարուցված գործը ընդդէմ ժող. լուս. մինիստր Կասսօյի, որ չը թոյլատրեց Բուսեանցէվի թանգարանին՝ յանձնել տիկնոջը, Լ. Ն. Տոլստոյի ձեռագրերը։ Զեկուցանողն էր սենատի օբէր-պրոկուրոր Դոբրովոլսկին, որ այն կարծիքի էր՝ թէ Կասսօն արգելք դնելով ձեռագրերի վրա, վարվել է անկանոն կերպով։ Քուէարկութեան ժամանակ 5 սենատոր միացան օբէր-պրոկուրոր Դոբրովոլսկիի կարծիքին, 3-ը խօսեցին դէմ։ Տարաձայնութեան պատճառով գործը յանձնվում է սենատի ընդհանուր ատեանին և կը քննվի աշնանը։

— Պետերբուրգի գերմանական դեսպանատունը տեղեկութիւն է ստացել, որ կոմս Մ. Վիտէն նշանակվելու է արտաքին գործերի մինիստր։

— Եալտայից հեռագրում են, որ Դումբաձէն նախագահուշացնելով Բարձր անձերի գալստեան մասին, կարգադրում է մինչև յունիսի 1-ը մաքրել քաղաքային փողոցները։

— Ճան. հաղ. մինիստր Բուխլովի կարգադրութեամբ թղթախաղը ամբարային գնացքներում միանգամայն արգելվում է։

— Ներքին գործերի մինիստրը ձեռք է առնում միջոցներ այն լուրերի առիթով, որ հաղորդվեց «Н. Вр.»-ի մէջ, թէ Ռուսաստան են եկել երիտասարդ-թիւրքերի գործակալները պանիսլամական պրոպագանդայի և սրբազան պատերազմի համար դրամ հանգանակելու նպատակով։

— «Каспій»-ին հեռագրում են Մոսկվայից, որ յայտնի միլիոնատէր բարեգործ Շամսի Ասադուլայեվի Ալկինը կազմել է կանանց բարեգործական ընկերութիւն, որի օգտին նուիրել է 16,000 բուբլի։

— Սենատը թոյլ չը տուեց քննիչ Լբժինին մեկնել Ղրիմ և որոշեց նրա գործը քննել այս ամառ։

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

(ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՀԵՌ. ԳՈՐԾ.)

9 ապրիլի

Վիլլա-կոմբիլ։ Զինուորական օդագնաց Դէբլամօնը, ընկնելով 100 մետր բարձրութիւնից, մահացաւ։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Ֆինլանդական մեծ իշխանութեան սատաս-սեկրէտար բարոն Լանգոֆ գտնում է գեներալ՝ արձակվելով պաշտօնից համազգեստով ու կենսաթոշակով։

Գեներալ Մարկովը նշանակվում է Ֆինլանդական մեծ իշխանութեան սատաս-սեկրէտար-մինիստր։

Զինուորական խորհուրդը հաստատութիւն տուեց զեներալ-շտաբի վարչութեան առաջարկութեանը, որպէսզի Նիկոլայևեան զինուորական ճեմարանի ուսանողների թիւը աւելանայ մէկ ու կէս անգամ։

«Բեկ»-ի խմբագիրը ենթարկվում է պատասխանատուութեան 1034-րդ յօդուածով։ «Լուչ»-ը ենթարկվեց 500 ր. տուգանքի։

Բանտային վարչութիւնը նախագծել է մի քանի բերդեր հաստատել զանազան շրջաններում թռքատուաւոր բանտարկեալների համար։

1912 թ. պետական ընդհանուր եկամուտները եղել են 3.106,329,000 ր., ծախքերը՝ սովորական՝ 2,398,325,000 ր., արտակարգ 320,738,000 բուբլի։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ Ա. ԲԱԼԱՆԹԱՐ
Ե. ՏԷՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆ
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՑԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԾԵՐԱՑԱԾՆԵՐԻ ՀԱՄԱՐ



Սկավուլինն է ամենալաւ լուծողականը հասակաւորների համար։ Սկավուլինը—դեղհատիկներ է առանց հոտի և համի, չէ գրգռում, ներգործում է մեղմ և դուրեկան կերպով ու բժշկում է նոյնիսկ խրոնիկական կապութիւնը։ Ծախվում է բոլոր դեղատներում։

(B. 22397)

ՍԿԱՎՈՒԼԻՆ։

Мраморно-мозаичное заведеніе

Б. Вилла и А. Рицци

Михайловскій пр. № 42. Телефонъ № 620.
ИМѢЮТСЯ всегда въ большомъ выборѣ готовыхъ ПАМЯТНИКОВЪ изъ разнаго порода МРАМОРА и ГРАНИТА.
Принимаются всевозможныя МОЗАИЧНЫЯ работы и ОБЛИЦОВКИ ФАСАДОВЪ ЕСТЕСТВЕННЫМЪ и ИСКУССТВЕННЫМЪ КАМНЕМЪ.

171. 13—11

(հ. կ.)

Въ книжномъ магазинѣ „ГУТТЕНБЕРГЪ“

Въ Тифлисѣ продаются:

Арменія, путевыя очерки и этюды, Линча, въ двухъ томахъ, съ 197 иллюстраціями, въ переплетѣ . . . . . 18 р. — к.
Колонизація армянъ въ Россіи . . . . . — р. 20 к.
Очерки кавказской фауны и охоты, Калиновскаго . . . . . — р. 70 к.
Справочная книга, русскихъ и иностранныхъ промышленно-техническихъ предпріятій, инж. Иванова и Хачко . . . . . 5 р. 50 к.
Арменія въ эпоху Юстиніана, политическое состояніе на основѣ Нахараркаго строя, Адонца . . . . . 4 р. — к.
Указатель дѣйствующихъ въ Имперіи акціонерныхъ предпріятій и торговыхъ домовъ. Составленъ по даннымъ извлеченнымъ изъ матеріала отдѣла торговли, особенной канцеляріи по Кредитной части департамента желѣзныхъ дѣлъ министра финансовъ. Свѣдѣнія объ облигаціяхъ, Тамановъ, въ 2-хъ частяхъ . . . . . 10 р. — к.

273.

(հ.)

ՅԻՆՈՒԹԵԱՆ ՆԻՒԹԵՂԷՆՆԵՐԻ ՊԱՀԵՍՏ
Իսմեաներ Ի. Ս. Պօնդոյեվի
Թիֆլիս, Ելիզավետին. փ. № 164, անկիւն Բակինսկայա փ.։ Տելէֆոն № 10—93.
ՊԱՀԵՍՏՈՒՄ ԿԱՆ
ՑԵՄԵՆՏ ԵՐԿԱԹԷ ԳԵՐԱՆՆԵՐ
ՑԵՄԵՆՏ—անկիւնի, կաթսայի, բիթլէնոյ, տանիքի՝ սև և ցինկով պատած։ ԱՍԵՐԿԱԹ